

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՈՃԻՐՆԵՐ

Առաջին կարգի ոճիրները կ'ընդգրկեն.

- Ճշդուած երեխայի չարաշահում, ըստ Քրեական Օրենսգիրքի (PC) 273a(a)-րդ յօդուածի
- Տարեցի կամ անկախ չափահասի չարաշահում, ըստ Քրեական Օրենսգիրքի 368 յօդուածի եւ
- Խարդախութիւն կառավարական առողջապահական խնամքի կամ աջակից ծրագրի մը հանդէպ:

Եթէ դուք դատապարտուած էք ԿԱՍ բանտարկուած ըստ **Առաջին Կարգի** ոճիրի ԱՆՑԵԱԼ 10 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԸՆԹԱՑՔԻՆ, ապա դուք իրաւասու **ՉԷՔ** անդամագրուելու իբրեւ IHSS-ի մատակարար, կամ IHSS ծրագրիին աջակից ծառայութիւններ տալու դիմաց դրամ ստանալու, նոյնիսկ եթէ ձեր ոճիրը ջնջուած է թղթածրարէն:

Վերանայման Խնդրանք

Եթէ դուք հաւատացած էք, որ քառնթին/Չանրային Իշխանութիւնը/Ոչ շահութաբեր Ընկերակցութիւն մը սխալմամբ ձեր իրաւասութիւնը մերժած է, դուք իրաւունք ունիք Մատակակարի Անդամագրութեան Վերանայման Միաւորին (Provider Enrollment Appeals Unit, PEAU) հետ Վերանայման Խնդրանքի ձեւ (Appeal Request form, SOC 856) լեցնել եւ Վերանայման Խնդրանքի ձեւը փոստով դրկել հետեւեալ հասցէին.

California Department of Social Services
Policy and Litigation Branch
Provider Enrollment Appeals Unit, MS 9-9-04
P.O. Box 944243
Sacramento, CA 94244-2430

Մատակակարի Անդամագրութեան Վերանայման Միաւորին (PEAU) Վերանայման Խնդրանք պէտք է յղուի քառնթին/Չանրային Իշխանութեան/Ոչ շահութաբեր Ընկերակցութեան կողմէ մերժումի ծանուցագրի թուականէն 60 օրուան ընթացքին:

Եթէ որեւէ հարցում ունիք վերանայման գործընթացի վերաբերեալ, նաեւ կրնաք կապուիլ Մատակակարի Անդամագրութեան Վերանայման Միաւորին (PEAU) հետ հեռաձայնելով (916) 556-1156 թիւին:

Առաջին Կարգի ոճիրի դատապարտութեան պարագային, գիտցէք, որ դուք իրաւասու **ՉԷՔ** ստանալու անհատական զանցառում կամ դիմել ընդհանուր բացառութեան Խնդրանքի համար: